



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԻՐԻ ԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվական

### ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Արման Աբրահամյանը, Նարեկ Անտոնյանը, Անահիտ Առաքելյանը, Արուս Արզումանյանը, Արմեն Ղազարյանը, Գևորգ Մուրադյանը, Մարգարիտա Պետրոսյանը, Խոսրով Ստեփանյանը, Սոֆիկ Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ քննակազմի անդամները՝ Արտաշես Ղարաբաղյանը, Սևակ Գաբրիելյանը, Բաղդասար Թովմասյանը, Անդրանիկ Մեջլումյանը, Զոհրակ Հովհաննիսյանը, Նաիրի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Սիրանուշ Նիկողոսյանը, աշխատակազմի քննակազմի պետ, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի պետ Բենիամին Թադևոսյանը, աշխատակազմի քննակազմի պետ, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ Արագ Հակոբյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Հայկուհի Ասատրյանը, աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ Բարկեն Բեգլարյանը, աշխատակազմի զարգացման ծրագրերի և զբոսաշրջության բաժնի պետ Հայկ Սարգսյանը, «Եղվարդի բարեկարգում և բնակֆոնդ» ՀՈԱԿ-ի տնօրեն Վարադաշտ Վարդանյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորայր Սարգսյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Զաքարյանը:

1.Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Նաիրի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 14-ի առաջին նստաշրջանի հերթական նիստի օրակարգը.

1) Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 19-ի N 56 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

2) Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 25-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

3) Նաիրի համայնքի սեփականություն հանդիսացող 2023 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.

4) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին.

5) Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 242-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

6) Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի N 266-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

7) Նաիրի համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

8) Նաիրի համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին.

9) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ընդերքօգտագործման նպատակով վարձակալության հանձնելու մասին.

10) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը հրապարակային սակարկությամբ օտարելու և օտարման մեկնարկային գներ սահմանելու մասին.

11) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին.

12) Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 8-ի N 172-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

13) Հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին.

14) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին.

15) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին.

16) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին.

17) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին.

18) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին.

19) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին.

20) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին.

- 21) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին.
- 22) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին.
- 23) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին.
- 24) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին.
- 25) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին.
- 26) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
- 27) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
- 28) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
- 29) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
- 30) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
- 31) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել – 1

Վարդան Ասատրյանը

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 16-Ա/

2. Լսեցին

**ՆԱԽՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N 56 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 01/04/06790-2023 գրությունը՝ Նախրի համայնքի ավագանին որոշում է.

1. Նախրի համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 19-ի «Նախրի համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 56 որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է ընդունման օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-1

Չի քվեարկել – 1

Վարդան Ասատրյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17-Ա/

3.Լսեցին

**ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի՝ **Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝**

Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի <<Նաիրի համայնքի սեփականություն հանդիսացող 2022 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը և 100 % մաշված, հետագա օգտագործման ոչ պիտանի և դուրս գրման ենթակա գույքի ցանկը հաստատելու մասին>> N 25-Ա որոշմամբ հաստատված գույքագրման ցուցակի N 1 և N 13 հավելվածներում կատարել փոփոխություն և ավելացնել Նաիրի համայնքի 2023 թվականի բյուջեի <<Հանրային ծառայություն>> ծրագրի 5122 հոդվածով 96250, 414960, 319999.2, 298800 դրամների ձեռքբերված գույքերը՝ համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել – 1

Վարդան Ասատրյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18-Ա/

4.Լսեցին

**ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱԶՈՂ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000 թվականի հունիսի 2-ի N 102 հրամանը, հիմք ընդունելով գույքագրման հանձնաժողովի նախագահ Կարեն Հարությունյանի զեկույցը՝ **Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Նաիրի համայնքի սեփականության 2023 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն 1-15 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել – 1

Վարդան Ասատրյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19-Ա/

5.Լսեցին

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Նաիրի համայնք, քաղաք Եղվարդ, Երևանյան 15 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող <<Եղվարդի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի առաջին հարկի թիվ 7 տարածքը՝ 171,0 քմ մակերեսով, 1 տարի ժամկետով որպես մարզասրահ օգտագործելու նպատակով <<Նարինե Մկրտչյան Համբարձումի>> ԱԶ-ին վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

2. Սահմանել տարածքի վարձակալության արժեքը 1 քմ-ի համար 200 դրամ, գույքի վարձակալության ընդհանուր ամսական վճարը՝ 34200 դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին քաղաքացի <<Նարինե Մկրտչյան Համբարձումի>> ԱԶ-ի հետ կնքել տարածքի վարձակալության պայմանագիր:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-1

Չի քվեարկել – 1

Վարդան Ասատրյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ա/

6.Լսեցին

**ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 242-Ա ՈՐՈՇՄԱՆ ՍԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ **Նաիրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին» N 242-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերը շարադրել նոր, հետևյալ խմբագրությամբ.

«1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Նաիրի համայնքի Քասախ գյուղի Ա. Ջալալյան 1 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկի թիվ 4 սենյակը՝ 34.8 քմ մակերեսով, 1 տարի ժամկետով, ԱԶ Լիլիթ Սարգսյանին ամենօրյա դասապատրաստում իրականացնելու նպատակով վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

2.Սահմանել տարածքի վարձակալության արժեքը 1 քմ-ի համար 400 (չորս հարյուր) դրամ, ամսական վճարը՝ 13920 (տասներեք հազար ինը հարյուր քսան) դրամ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-1

Չի քվեարկել – 1

Վարդան Ասատրյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ա/

7.Լսեցին

**ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 266-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 27-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի N 1531-Ն որոշման 5-րդ կետը՝ **Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային

դրույքաչափերը հաստատելու մասին» N 266-Ա որոշմամբ հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, բացառությամբ հաստիքացուցակի համայնքային ծառայության նոր պաշտոնների, որոնք ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0  
Ձի քվեարկել – 1  
Վարդան Ասատրյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

8.Լսեցին

**ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի՝ **Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Նաիրի համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածներ 1- 5-ի:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0  
Ձի քվեարկել – 1  
Վարդան Ասատրյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ա/

9.Լսեցին

**ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի և 82.1-րդ հոդվածի 6-րդ մասի, Նաիրի համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Նաիրի համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

10.Լսեցին

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ**

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Ղեկավարվելով Հոդային օրենսգրքի 76-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի ը) ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2022 թվականի հունիսի 21-ի NL-682 լեռնահատկացման ակտը, ինչպես նաև օգտակար հանածոների արդյունահանման N ՇԱԹ-29/682 թույլտվությունը՝ **Նաիրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Նաիրի համայնք, Եղվարդ քաղաք, 10 հողամաս հասցեում գտնվող, 07-004-1600-0007 կադաստրային ծածկագրի 7,2233 հա ընդերքօգտագործման հողամասը վարձակալության հանձնել «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ին 18 տարի ժամկետով, 3250000 (երեք միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամ տարեկան վարձավճարով՝ ըստ հողամասի նպատակային նշանակության օգտագործման:

2.Սահմանված վարձավճարի չափը վերանայվում է կողմերի համաձայնությամբ՝ սույն վարձակալության պայմանագիրը վավերացնելուց հետո յուրաքանչյուր 3-րդ (երրորդ) տարում:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

11.Լսեցին

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ**



**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ Նաիրի համայնքի ավագանին **որոշում է.**

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մեկ տարվա ընթացքում, համայնքի կապիտալ ծախսերի բավարարման նպատակով հրապարակային սակարկությամբ օտարելու վերաբերյալ և սահմանել նրանց մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-1  
Զի քվեարկել – 1  
Արմեն Համբարձումյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

12.Լսեցին

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ  
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի, հիմք ընդունելով Սուրեն Գրիգորի Հովսեփյանի 2024 թվականի հունվարի 29-ի դիմումը՝ **Նաիրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Նաիրի համայնքի բնակիչ Սուրեն Գրիգորի Հովսեփյանին վարձակալության իրավունքով տրամադրված Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,72 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել 15 (տասնհինգ) տարով:

2. Հողի վարձավճար սահմանել տարեկան 20000 (քսան հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0  
Զի քվեարկել – 1  
Արմեն Համբարձումյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

13.Լսեցին

**ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 172-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 8-ի <<<<Եղվարդի բարեկարգում և բնակֆոնդ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը, կանոնադրության փոփոխությունը, աղբահեռացման գրաֆիկը, սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին >>N 172-Ա որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 8-ի <<<<Եղվարդի բարեկարգում և բնակֆոնդ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը, կանոնադրության փոփոխությունը, աղբահեռացման գրաֆիկը, սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին >>N 172-Ա որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2-ի:

3. Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 8-ի <<<<Եղվարդի բարեկարգում և բնակֆոնդ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը, կանոնադրության փոփոխությունը, աղբահեռացման գրաֆիկը, սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին >>N 172-Ա որոշման N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 3-ի:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

14.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, հիմք ընդունելով Նաիրի համայնքի ղեկավարին քաղաքացի Էդգար Սարգսի Արշակյանի կողմից ներկայացված դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Նաիրի համայնք, քաղաք Եղվարդ, Ե. Չարենցի փողոց, 212 հասցեում գտնվող, վարձակալության իրավունքով Էդգար Սարգսի Արշակյանին պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 09122020-07-0130) 07-004-0141-0054 կադաստրային ծածկագրի 0,006 հա հասարակական կառուցապատման հողամասի վրա կառուցված սեփականության իրավունքով իրեն պատկանող առևտրի սրահի սպասարկող հողամասն ուղղակի վաճառքով օտարել Էդգար Սարգսի Արշակյանին հողի կադաստրային արժեքով՝ 173250 (հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր հիսուն) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0  
Չի քվեարկել - 1  
Արմեն Համբարձումյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

15.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /քնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-35 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Քասախ գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 07-065-0293-0009 կադաստրային

ծածկագրի 0.342629 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել  
բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 15-ի N 9 որոշմամբ հաստատված  
Քասախ գյուղի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

16.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի  
29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի,  
Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն  
որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի  
Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային  
փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N  
1/վ-30 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Քասախ գյուղում  
գտնվող, Դիանա Ալեքսանդրի Բաղդասարյանի սեփականությունը հանդիսացող 07-065-0295-  
0074 կադաստրային ծածկագրի 0.0645 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության  
վարելահողը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 15-ի N 9 որոշմամբ  
հաստատված Քասախ գյուղի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան  
փոփոխություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ա/

17.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /քնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-21 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Քասախ գյուղում գտնվող, Դիանա Ալեքսանդրի Բաղդասարյանի սեփականությունը հանդիսացող 07-065-0306-0003 կադաստրային ծածկագրի 0.07902 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել քնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 15-ի N 9 որոշմամբ հաստատված Քասախ գյուղի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

18.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /քնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-22 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Ջովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Հովհաննես Ռուբենի Ջոիրաբյանին պատկանող 07-029-0215-0054 կադաստրային ծածկագրի 0.12299 հա մակերեսով արդյունաբերության,

ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Ջովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

19. Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ջեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-37 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Պոռշյան գյուղում գտնվող, վարձակալության իրավունքով Յուրա Համլետի Սողոյանին պատկանող 07-053-0222-0020 կադաստրային ծածկագրի 0.1 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի կատեգորիա:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պոռշյան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 42-Ն որոշմամբ հաստատված Պոռշյան բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ա/

20.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ԵՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /քնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-42 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Պոռշյան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Աննա Զաքարի Ներսիսյանին և Դավիթ Վահեի Բոշնաղյանին պատկանող 07-053-0383-0043 կադաստրային ծածկագրի 0.04 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը փոխադրել քնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պոռշյան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 42-Ն որոշմամբ հաստատված Պոռշյան քնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-18 Դեմ-0 Չեղարկած-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35-Ա/

21.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ԵՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /քնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային

փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-60 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Քասախ գյուղում գտնվող, Դավիթ Մանվելի Սիմոնյանի սեփականությունը հանդիսացող 07-065-0305-0008 կադաստրային ծածկագրի 0.05 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 15-ի N 9 որոշմամբ հաստատված Քասախ գյուղի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-18 Գեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36-Ա/

21.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ Ն ՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143 հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-59 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Ջովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Հովհաննես Ռուբենի Ջոիրաբյանին պատկանող 07-029-0215-0059 կադաստրային ծածկագրի 0.1 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Ջովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-18 Գեմ-0 Ձեռնպահ-0



Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37-Ա/

22.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-67 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Քասախ գյուղում գտնվող Արմեն Ռազմիկի Ազատյանի սեփականությունը հանդիսացող 07-065-0305-0006 կադաստրային ծածկագրի 0.064 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 15-ի N 9 որոշմամբ հաստատված Քասախ գյուղի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38-Ա/

23.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային

փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-66 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Քասախ գյուղում գտնվող, Հովիկ Վաչագանի Պետրոսյանի սեփականությունը հանդիսացող 07-065-0305-0014 կադաստրային ծածկագրի 0.05774 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 15-ի N 9 որոշմամբ հաստատված Քասախ գյուղի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39-Ա/

24.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-65 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Քասախ գյուղում գտնվող, Դիանա Ալեքսանդրի Բաղդասարյանի սեփականությունը հանդիսացող 07-065-0306-0004 կադաստրային ծածկագրի 0.07095 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 15-ի N 9 որոշմամբ հաստատված Քասախ գյուղի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40-Ա/

25.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-64 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Ջովունի գյուղում գտնվող, Հայկ Վարուժանի Մուսինյանի սեփականությունը հանդիսացող 07-029-0250-0024 կադաստրային ծածկագրի 0.1486 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Ջովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41-Ա/

26.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, հիմք ընդունելով Ազատ Արթուրի Թադևոսյանի դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Նաիրի համայնքի Ջովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Ազատ Արթուրի Թադևոսյանին պատկանող 07-029-0186-0093 կադաստրային ծածկագրի 0,5858 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների

հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակման տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ա/

27. Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, հիմք ընդունելով «ՄԹԵՅՋ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի տնօրեն Բագրատ Դիվանյանի լիազորված անձ Արսեն Մուրադխանյանի դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Նաիրի համայնքի Եղվարդ քաղաքում գտնվող, սեփականության իրավունքով «ՄԹԵՅՋ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ին պատկանող 07-004-0544-0041 կադաստրային ծածկագրի 0,305 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակման տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ա/

28. Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, հիմք ընդունելով Հովսեփ Միրանի Միրոյանի լիազորված անձ Աշոտ Ավետիսյանի դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Նաիրի համայնքի Եղվարդ քաղաքում գտնվող, սեփականության իրավունքով Հովսեփ Միրանի Միրոյանին պատկանող 07-004-0546-0116 կադաստրային ծածկագրի 0,9143 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ խելացի անասնագոմ կառուցելու նպատակով:

2. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ա/

29.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, հիմք ընդունելով Գայանե Արծրունու Գրիգորյանի դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Նաիրի համայնքի Քասախ գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Գայանե Արծրունու Գրիգորյանին պատկանող 07-065-0299-0011 կադաստրային ծածկագրի 0,3899 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ սառնարանային տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Ա/

30.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, հիմք ընդունելով Արշակ Վալիկոյի Թորոյանի դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Նաիրի համայնքի Զորավան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Արշակ Վալիկոյի Թորոյանին պատկանող 07-031-0220-0019 կադաստրային ծածկագրի 0,2591 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ անասնագոմ կառուցելու նպատակով:

2. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

31.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, հիմք ընդունելով «ԷՄ ԷՌ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի տնօրեն Հայկ Զիլինգարյանի դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Նաիրի համայնքի Եղվարդ քաղաքում գտնվող, սեփականության իրավունքով «ԷՄ ԷՌ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ին պատկանող 07-004-1598-0022 կադաստրային ծածկագրից 73,0507 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0,07 հա-ի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մեքենատրակտորային պարկ կառուցելու նպատակով:

2. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 47-Ա/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱԶԻԶՅԱՆ



ՎԱՐԴԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ



ԼԵՆԴՐՈՒՇ ԱՐՇԱԿՅԱՆ



ԱՆՆՄԱՆ ԲԱԲԱՅԱՆ



ՌԱՖԻԿ ԶՈՂՐԱԲՅԱՆ



ԽԱԶԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ



ԱՐՄԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ



ԱՆԱԿԻՏ ՀԱԿՈԲՅԱՆ



ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ԳՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



ԼԻԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՔՐԻՍՏԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ԱՆԴՐԱՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ



ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ



ԱՆԱՀԻՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ



ՊԵՏՐՈՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ



Համայնքի ղեկավար

ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ



Նիստին արձանագրեց՝ Հասմիկ Զաքարյանը







Տավելված  
Նախորդ համայնքի ավագանու  
«14» փետրվարի 2024 թվականի  
N 17-Ա որոշման

## ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՆԱԽՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչներով սահմանվում են Նախրի համայնքում (այսուհետ՝ համայնք), սոցիալական աջակցության ոլորտում համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին սոցիալական ծառայություններ մատուցելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, ծառայություն ստանալու համար դիմած անձի (անձանց) կարիքների գնահատման չափորոշիչները, դրանց համապատասխան գնահատման միավորները և ընտանիքի գնահատման թերթիկի ձևը:

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, խոցելի ընտանիքներին սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության ծառայությունների բարելավման գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

3. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

- 1) համայնքի ավագանուց՝ մինչև հինգ անդամ,
- 3) սոցիալական աշխատողներից՝ մինչև չորս անդամ,
- 4) համայնքապետարանի աշխատակազմից՝ մինչև երեք անդամ,
- 5) համայնքային ենթակայության կազմակերպություններից՝ մինչև երեք անդամ,
- 6) համայնքում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններից՝ մինչև յոթ անդամ,
- 7) համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների ներկայացուցիչներից՝ մինչև վեց անդամ

8) համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից՝ մինչև չորս անդամ:

4. Հանձնաժողովի ձևավորման մասին հայտարարությունը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից տեղադրվում է համայնքի պաշտոնական կայքում և փակցվում է համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:

5. Սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման հանձնաժողովը կարող է ունենալ ենթահանձնաժողովներ՝ այդ թվում սոցիալական աջակցության տրամադրման: Ենթահանձնաժողովում ընդգրկվում են՝

- 1) համայնքի ավագանուց՝ մինչև հինգ անդամ.
- 2) սոցիալական աշխատողներից՝ մեկ անդամ.
- 3) համայնքապետարանի աշխատակազմից՝ մինչև երկու անդամ.
- 4) համայնքային ենթակայության կազմակերպություններից՝ մեկ անդամ.
- 5) համայնքում գործող հասարակական կազմակերպություններից՝ մինչև երեք անդամ.
- 6) համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցներից՝ մինչև երկու անդամ.
- 7) համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից՝ մեկ անդամ:

6. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելուց հետո 10 օրվա ընթացքում, Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված ժամկետը բաց թողնելուց հետո, ստացված դիմումները համայնքապետարանի կողմից ենթակա չեն ընդունման և քննարկման:

8. Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Հանձնաժողովի նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

9. Հանձնաժողովի նախագահը նշանակվում է ոտուացիոն կարգով՝ նշանակվելու պահից (1) մեկ տարի ժամկետով:

10. Հանձնաժողովի քարտուղար է նշանակվում համայնքի սոցիալական աշխատողը (սոցիալական աշխատողի բացակայության դեպքում հանձնաժողովի կազմում ընդգրկված համայնքապետարանի աշխատակիցներից մեկը):

11. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է սույն չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան և նիստերի միջոցով: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի մասին: Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

12. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ:

13. Հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներ և կազմված եզրակացությունները ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

## **II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ)**

14. Հանձնաժողովի գործունեությունը ուղղված է ընտանիքների ու անհատների՝ որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնմանը, աջակցմանը, ռիսկերի կառավարմանը՝ դրանց կարգավորման ու նվազեցմանը: Հանձնաժողովը, համախմբելով տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական և տարածքային կառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ մատուցողներին, սոցիալական ծառայություններից օգտվողներին, քաղաքացիական հասարակության դերակատարներին, աջակցում է համայնքի կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների բարելավմանը, աղքատության կրճատմանը, սոցիալական ներառմանն ուղղված մասնակցային գործընթացներին:

15. Հանձնաժողովը կարող է իրականացնել միջոցառումներ և գործառույթներ, որոնք ուղղված են՝

- 1) համայնքի կարիքների հիման վրա՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացին.
- 2) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական կարիքների կամ դրանցից ցանկացածի հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների մշակմանը, առաջարկությունների ներկայացմանը, համայնքում սոցիալական աջակցության տրամադրման բարենպաստ միջավայրի ստեղծմանը.

- 3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն ուղղված ծառայությունների մշակմանը, կարգավորմանը.
- 4) մասնակցել թիրախ բնակավայրերում կարիքների գնահատման մեթոդաբանության քննարկմանը, մշակմանը, օժանդակել կարիքների գնահատման համար տեղեկատվության փոխանակմանը (խնդիրների) դիսկերի բացահայտմանը, ուղղորդմանը.
- 5) մասնակցել համայնքային հանդիպումներին, քննարկումներին, տեղեկատվական միջոցառումներին.
- 6) նպաստել սոցիալական նշանակության ծրագրերի հասանելիության, հասցեականության և տեսանելիության բարձրացմանը.
- 7) աջակցել տեղական սոցիալական ծրագրերի կանոնավոր և պարբերական մոնիտորինգներին.
- 8) նպաստել համայնքում մատուցվող սոցիալական աջակցության ծառայությունների կայունությանը, այդ թվում՝ ցուցաբերել աջակցություն հավաստագարման գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը.
- 9) օժանդակել մշակված տեղական սոցիալական ծառայությունների ֆինանսավորման աղբյուրների բացահայտման աշխատանքներին.
- 10) մասնակցել և (կամ) ցուցաբերել խորհրդատվական աջակցություն համայնքահեն սոցիալական ծառայությունների մասնակցային պլանավորմանն ու մատուցմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի առաջարկների գնահատման և ընտրության գործընթացներին:

### III. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

16. Աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.
  - 1) համայնքի բնակիչները, ովքեր հաշվառված են կամ վերջին 2 տարում փաստացի բնակվում են համայնքում,
  - 2) Արցախի Հանրապետությունից տեղահանվածները, ովքեր փաստացի բնակվում են համայնքում:
17. Դիմումը ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմ, հետևյալ եղանակով.

- 1) անձամբ՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)՝
- 2) փոստով՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)՝
- 3) էլեկտրոնային՝ դիմումը հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով կամ համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը):

18. Դիմումին կցվում են սոցիալական վիճակը հավաստող հետևյալ փաստաթղթերը.

- 1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
- 2) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին (անհրաժեշտության դեպքում).
- 3) բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի որոշման պատճենը,
- 4) բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ քաղվածք ամբուլատոր քարտից (առկայության դեպքում) .
- 5) սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթուղթը՝ տրված սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից (անհրաժեշտության դեպքում).
- 6) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստերը հիմնավորող փաստաթղթեր (դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնածին աղետի պատճառած վնաս, առանց ծնողական խնամքի մնալու և այլ).
- 7) փոստային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումը պետք է լինի ստորագրված և դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի պատճենները.

8) էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումը պետք է լինի ստորագրված և դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի սքանավորված տարբերակները:

19. Դիմումները համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 2 (երկու) շաբաթյա ժամկետում, հանձնաժողովի քարտուղարը դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկմանը:

20. Հանձնաժողովի նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին տրվում է համապատասխան ընթացք անհրաժեշտության դեպքում կատարում է տունայց, ընտանիքի կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում, դիմումի գրավոր պատասխանի տրամադրում:

21. Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել նաև դիմումատուն:

22. Հանձնաժողովի տված դրական եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում: Հանձնաժողովի տված բացասական եզրակացության դեպքում դիմումատուն գրավոր տեղեկացվում է:

23. Համայնքում սոցիալական աջակցության տրամադրման յուրաքանչյուր գործընթաց կազմակերպվում և իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:

24. Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 աշխատանքային օրվա ընթացքում:

#### IV. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

25. Դիմումի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խումբ, անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի որոշմամբ այցելում է դիմողի ընտանիք, կատարում ընտանիքի կարիքների գնահատում և լրացնում գնահատման թերթիկը:

26. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների (բժիշկ, հոգեբան և այլն):

27. Ընտանիքի գնահատման թերթիկը՝ տունայց կատարելուց հետո աշխատանքային խմբի կողմից ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարին:

28. Ներկայացված գնահատման թերթիկները քննարկվում են հանձնաժողովի նիստում:

29. Քննարկման արդյունքներով հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

30. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ աջակցություն ցուցաբերելու վերջնական որոշում կայացնելու համար: 31.

Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

32. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն) անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի և հանձնաժողովի երկու անդամի հատուկ եզրակացության հիման վրա, հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և անհապաղ որոշումների կայացման միջոցով:

#### **Վ. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

33. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

- 1) նպաստառու ընտանիք - 1 միավոր,
- 2) միայնակ մայր - 1 միավոր,
- 3) ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա - 1 միավոր,
- 4) բազմազավակ՝  
ա. չորս, հինգ անչափահաս երեխա ունեցող ընտանիք -1 միավոր,  
բ. վեց և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիք - 2 միավոր,
- 5) պարտադիր ժամկետային զինճառայող ունեցող ընտանիք 2 միավոր,
- 6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք- 2 միավոր
- 7) հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիք -2 միավոր
- 8) տնակ կացարանում կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք - 2 միավոր
- 9) վարձով բնակվող ընտանիք - 1 միավոր
- 10) դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք - 3 միավոր
